


ու մուռը լինեն, որովհետև միայն այն ժամանակ հնարաւոր է ստանալ հաւասար այնութիւն և հաստութիւն ունեցող աւեր. իսկ այդ բանը շատ անհրաժեշտ է որպէս-
զի մէկ առը լաւ ծածկէ միւսին, որի շնորհիւ և աւերի մակերեւոյթի վերայ բուսած ձիւմերի, խոտերի և բոյսերի զանազան մնացորդներ յաջող կերպով փթեն և գ.) անպատճառ պէտք է աւերը կանոնաւոր շուռ տուած լինեն, այսինքն նոցա վերևի երեսները պէտք է դարձրած լինեն ցած և ոչ թէ միայն հողը պատռած ու տեղնուտեղը ակօսի մէջ թողած: Այս նպատակին հասնելու համար պէտք է գութանը շարժել ակօսի մէջ ուղղահայեաց դիրքով, առանց լծեցուելու այս և այն կողմ:

Հողեր վարելու աշխատութիւնները սովորաբար մերջանում են մշակուած և կամ աւելի յաճախ ցանած հողերի մէջ անձրեւային, ձեան և այլ ջրերի համար ակօսներ և կամ առուներ անցկացնելով, որ սովորաբար կատարուեն կամ սովորական երկթեւանի գութաններով և կամ բուկը առող գործիքով (ОКУЧНИКАМ), մեղանում կոկիասում մեծաւ մասամբ չթերով (СОХОЮ): Հեղեղներից նախարդողունայու համար առուները կամ ակօսները չպէտք է շատ խոր ընկած լինին, ուստի և եթէ վարելահող մակերեւոյթը բաւական զառիվայր է, պէտք է ակօսը գլխաւոր զառիվայրի վերաբերմամբ մի քիչ ծուռ անցկացնել և կամ ամենակարեւոր դէպքերում ուղղակի զառիվայրի ուղղութեամբ միայն կեռմաններով: Մայած հողի յատկութեանը այդ առուների մէջ եղած տարածութիւնը տարբեր են լինում: շատ պինդ խոնաւ և հարթ հաւասար հողերինը—3—4 սաժ, փխրուն, չոր և զառիվայր հողերինը—6—8 սաժ:

Գ. Դ.

(Կը շարունակուի)



RECUEIL DE CHANTS POPULAIRES

ARMÉNIENS.

«Հաւաքածոյ Հայոց ժողովրդական երգերի» հրատարակուելու է Փարիզում երկու ամիսը մի անգամ: Առաջին զբոյնը լոյս է տեսել, որ բովանդակում է՝ 1. Արաքսի արտասուքը. 2. Հերիք որդեակք. 3. Կիլիկիա. 4. Հայրիկ. 5. Զիւմ գլխին. 6. Բոյդ բարձր. և 7. Օրորոցի երգ:

Ժողովրդական է միայն այն երգը, որ բնագրամամբ և անմիջապէս է ստեղծում մի ժողովուրդ: Մի ազգի ժողովրդական երգերն այնքան բնորոշ են, որ չէ կարելի օտար և ցեղակից ազգերին հետ խառնել, Թէ որքան համապատասխան է հաւաքածուիս մէջ մի երգը կազմութեամբ և դաշնակով հայ ժողովրդական երգերի ոգուն և ոճին, ցոյց կտայ հետեւեալ քննութիւնը:

1. ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ. «Մայր Արաքսի ակօսութիւն. ձիւղ բողբոջական եկեղեցու երգ է (Choral), որ չէ կարող հիւսկային ժողովրդին յատուկ պաշտօնութեամբը Հայի՝ արեւելցու վառ զգացման թարգմանը լինել, ուր թէ ժողովրդական լինէր:

2. ՀԵՐԻՔ ՈՐԴԵԱԿՔ. եղանակը տաճկական է և կոչվում է «Պէյաթի» (խորոզ, աքլոր) շարքի-իցն է առնուած և այն խիստ աղաւաղած, Հատածները միանգամայն սխալ են բաժնած՝ ոչ թէ $\frac{4}{4}$ և $\frac{2}{4}$ է, այլ $\frac{6}{8}$ է, որ տաճկերէն եղանակների տաղաչափութեան մէջ «Երիւք Սէմայի» է՝ կոչուում: Եղանակը g Moll չէ, այլ f-g-a-b'-c'-d'-es-f-as Dur քառալար չղթայ է (Tetrachvd), fid-ը օտարամուտ է և միանգամայն հակառակ արեւելեան եղանակների ոգուն. իրր թէ դաշնակաւոր g Moll լինէր, որ և հիմնովին սխալ է. ցն ոչ թէ հիմնաձայն է (Tonica), այլ առաջին քառալարի երկրորդ աստիճանն է, որով մերջանում է եղանակը և, որ արեւելեան երգերի յատկանիշն է: Այսպիսով Պ. Լ. Եղիազարեանցը արեւելեան եղանակների չեղած սխալն աշխատել է օրրագրել, սակայն խոշոր սխալն էլ այս իսկ սրբագրութիւնն է. Անյարմար և անտեղի դարձուածները (Modulation) պղտորում են եղանակի պարզութիւնը և չեն յարմարում ոգուն: Բանաստեղծը քաջաբերուած հրաւեր է կարդում թշնամուծանքեւոր թոթափելու, իսկ դաշնակը եղանակին լալեան և յուսահատ բնաւորութիւն է ներշնչում:

3. Կիլիմի՝ «Երբոր բացուին», եղանակը նոր-մանդական է: Բառերը ֆրանսերէն լեզուով գրուած: որից բառացի թարգմանել է Պ. Ն. Ռուսինեան: Նորմանդիա բառի տեղ Կիլիկիայ ղնելով: Դաշնակ առաւել խնամքով է կազմած: Բայց այդ երգի (Nochturno) բնաւորութիւն է տալիս եղանակին:

4. ՁԱՅ(ԴԿ)՝ «Ծաւալ ծաւալ» (սխալ է: «Ծո-վածաւալ» պէտք է լինի): Հայ գրուածնի (աշուղ) յօրինածն է այս երգը: որ «Էրիկին» կոչուած պա-րեղանակի կազմութիւնն ունի: Որքան պարզ ու բնական է եղանակը: Բայց նոյնքան բռնի և անբնա-կան է դաշնակը: Երգի երկրորդ մասը՝ «անծայրա-ծիր»-իցն սկսած բոլորովին սխալ աստիճանով է երգուած և գրուած: պէտք է սկսէ կրկին առաջին մասի պէս և վերջանալու է ոչ թէ des-c', այլ as-g. որովհետեւ այս եղանակը յօրինուած է տաճկական «Պէյաթի արապան» եղանակի օրէնքով: ուստի ոչ թէ f Moll է: այլ առաջին մասին քառալար շղթան է c'-d'-e'-f'-g'-a-b', իսկ երկրորդինը՝ g-as-h-c'-d'-es-f'.

5. ՁԻԲ ԳԻՆԻՆ. Ժողովածուիս միակ գուռ Հայ ժողովրդական (Տոսպ գաւառի) երգն է: Դաշնակը պարզ է: որպէս և եղանակը: Բայց Հայ ժողովրդա-կան եղանակների աւելը չկայ: այլ պատկերացնում է միայն մի մեծած կմախք: Բառերը բոլորովին խառն ի խառն և շատ անմիտ և պատահական կեր-պով դասաւորուած: բովանդակութիւնը թերի է մնացած: այս երգին կցած է և մի այլ ժողովրդ-դական երգ: որ բոլորովին կապ չունի այս երգի իմաստի հետ: Գրեթէ նոյնը կարելի է ասել և միւս երգերի բառերի նկատմամբ:

5. ՐՈՅԼԻ ԲԱՐՁՐ. Եղանակը Պարսիկ ժողովրդա-կան—գուսանական է: Բանաստեղծութեան տաղաչա-փութիւնն արդէն վկայ է: որ Հայ ժողովրդական չէ: Երգն այնպէս է դաշնակած: որ կարծես լուրջ ող-բերգ լինի և: որ դաշնակների ընտրութեամբ: յա-ջորդութեամբ և ոճով յիշեցնում է Բեթհովէնի Egmont թատերգութիւնից (opera) ճիշդ Clärens Tdo-ը: Եղանակը g Moll չէ: այլ f-g-a-b-c'-d'-es Dur. քառալար շղթայով է կազմած և վերջանում է կրկին առաջին քառալարի երկրորդ աստիճանի վե-րայ: ուստի fis-ը միանգամայն անբնական և անտե-ղի է:

7. Աերջապէս տեարակը վերջին էջում զե-տեղած է Kazarenko-ի յօրինած և դաշնակած Ռա-փայէլ Պատկանեանի «Արի իմ սոխակ»-ը: Պ. Լ. Եղիազարեանն այս երգն էլ իրր հայի զգացման արդիւնք է ներկայացնում եւրոպացի երաժիշտնե-րի: Երաժշտական տարրական սխալներ էլ կան գրեթէ ամէն մի երեսում: Մինչև 28 էջը: Բարգ-

մանութիւնը տղեղ: սխալ: բռնի և շատ տեղ սար-քած է:

Այս երգերից ոչ մէկը: բացի «Զ.իմ գլխի ֆաթէն կիտամ»-ից: Հայ զիւղացի ժողովուրդը չէ երգում: որովհետեւ նախ իրանը չեն: երկրորդ իւր զգացմունքը նա արտայայտում է այնպէս: որ միջից արտացոլում է նորա ամբողջ կեանքն ու էութիւնը իւր բոլոր պատմական: բնական և առանձնայատուկ պայմաններով: Մեր կարծիքով Հայ ժողովրդական երգերը դաշնակելուց առաջ պէտք է քաջ հմուտ լինել Հայ ժողովրդի պատմական: բնական և ալ-գային պայմաններից: եղանակի կազմութեան: ո-գուն: ոճին: բառերի իմաստին: մեր ժողովրդական տաղաչափութեան: ժողովրդի երգեցողութեան և արտասանութեան հանգամանքներին և էլի մի շարք այլ բաներին: ապա ձեռնարկել դաշնակելու և հրատարակելու: հակառակ դէպքում միշտ թերի կողմ կմնայ:

Այս կերպ չենք կարող դադափար տալ մեր ժողովրդական եղանակների մասին առհասարակ օտարներին և մանաւանդ եւրոպացի երաժիշտնե-րին: պէտք է մեծ զգուշութեամբ և սրբութեամբ հաւաքենք մեր ժողովրդական երգերն ու պարեր-դերը: որոնք բոլորովին այլ եռանդ: այլ զգաց-մունք և այլ միտք են պարունակում: քան միւս արեւելեան ազգերինը:

Պ. Լ. Եղիազարեանը շատ է շտապել: ուս-տի և օտար եղանակներն: այն էլ այլանդակած: իրր Հայ ժողովրդական երգ է հրատարակել: որով և անշուշտ սխալ և հակառակ կարծիք պէտք է կազմեն մեր բարոյականի և մտաւորի: անցեալի և ներկայի մասին:

Մովսիսս վարդապետ:

